

ժ.Ա.ՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՊՓ

Ծախսային ելեւադրման հեռագիր :

Աս մօտերս Ղոնորայի Լ.Թէնէն ճեմարանը ետեւէ ինկած է Անգղիայէն մինչև Ամերիկայ ելեւադրական հեռագրով Եւրոպան Ամերիկայի հետ միացնելու խորհուրդը առաջ տանելու և ինչպէս որ կը տեսնուի՝ բաւական հաւանականութիւն կայ աս սոսկավիճխար խորհուրդին յաջողելուն , թէպէտ և ամենամեծ ծախքով , որուն ամենէն նըւազը կը հաշուի 15-20 միլիոն ֆրանք . որովհետև որչափ ալ ուղիղ կամ կարճ գիծը ընտրեն՝ հանդերձ այսու ամենայնիւ 2000 Անգղիական միլիոնէն աւելի է : Սովորական ոճով թէրը պատրաստելէն վերջը ամառուան խաղաղ օգերուն կրնան ծովը ինջեցնել , որովհետև մէյմը ծովուն տակը իջնալէն վերջը շատ աւելի ապահով են կարելու վտանգէն , պատճառաւ որ ամենէն սաստիկ մըրլիկներն ալ ծովուն երեսէն խիստ քիչ խորութեւ ծովը կը խռովեն , իսկ խորերը աւելի ալ հանգարտ են : Հեռաւորութիւնը ամենեւին տարբերութիւն մը չունի գործիքին , կամ թէ ըսենք ելեւադրական հոսանքաւոր արագութեամբ վրայ , բաւական է որ պահանջուած հաստութիւնն ունենայ . և ահա մասնաւորապէս աս բանիս համար գործիք մը հնարուեցաւ Ղոնորա և իրեք շարժուան մէջ հարկը Անգլ . մըն երկայնութեամբ արայէ թէլ շինեցին : Տարակոյս չկայ որ եթէ աս խորհուրդս առաջ երթայ՝ աշխարհքիս մէջ ինչուան հիմա եղած փորձերէն ամենէն աւելի նրաշաղին կ'ըլլայ : — Արդէն Տուվի ելեւադրական հեռագրով Անգլիա Եւրոպայի առաջին կարգի մայրաքաղաքներուն հետ միացած է , ու թէ որ Ամերիկային ալ յաջողելու ըլլայ , կրնան Նոր Օրլէանի օրագիրները հրատարակել ինչ որ նոյն առաւօտը պատահած է Իտալիա որ 8000 միլիոն տարակալութիւն ունի : Աս բանիս համար ամենէն յարմար կէտը սեպտեմբերէն Ամերիկայի մէջ հէլիֆոքս քաղաքը :

Աս միջոցիս կը սկսի ելեւադրական հեռագրի նոր ուղի մ'ալ Անգլիան Իւրաքայի հետ միացնելու . ինչպէս ուրիշ մ'ալ Անգլիայէն Պելժիս :

Հանձարար գէտ ին :

Ասպէքանի մը տարի առաջ Դայմի գետին մէջ խոշոր նաւ մը ընկղմեր էր , որն որ անշարժ ժայռի մը նման ջրին տակը ծածկուած անցուգարծի արգելք կ'ըլլար : Ըստ կերպով փորձեցին որ աս նաւ տեղէն հանեն , բայց ամէն ջանք փռւած ելաւ : Հանձարար սոյային մէկը առաջարկեց որ կապարէ երկու խոշոր տակառներու մէջ վառօք լեցնեն ու զուգահեռական գիրքով նաւուն կողքերուն տակը զետեղեն ջրասուզակ մեքենայով ու կրակ տան և վեր հանեն զանկայ : Աս երկու տակառները խողովակով մը իրարու հետ հաղոր-

դակցութիւն պիտի ունենային , և այս խողովակին մէջ ալ պատրոյգ մը , որուն ձեւքովը պիտի բռնկէրէն վառօքը :

Երկու անգամ աս բան փորձեցին , բայց երկու անգամն ալ այլևայլ պակասութեամբ անյաջող դընայ . և դժբաղդութեամբ աշխատող նաւավարներէն մէկը ջրասուզակ մեքենային չուաներուն մէջ պլլուելով խղճուեցաւ : Վերջապէս վերջի անգամ մ'ալ ուղեցին փորձել ամենայն արգելքներուն դէմը առնելով : Չորս հազար լիտր վառօք տակառներու մէջ լեցուցած էր , և նոյն կերպով ծովը իջեցուցած . և ամենայն բան ըմբշուցին , և մնաց որ կրակը տան : Չորս կողմէն բոլոր նաւակները քաշուած էին , բայց ի մէկ նաւակէն որ պատրոյգը պիտի վառէր , և պատրաստ կեցեր էր մէկէն փախչելու : Բազմութիւն ժողովըրդեան բոլոր եզերքը բռնած հետաքրքրութեւ պակասէր տեսնելու այս նորանշան դէպքը : Նշանը արուեցաւ , պատրոյգը բռնկցուցին , մէյմ'ալ հինգ վայրկեան անցած չանցած սոսկալի շառաւմամբ մը տակառները ճաթեցան ու ութը հարիւր ոտքէն աւելի տարածութեամբ ջրի զանգուած մը գմբէթաձև օդը հանեցին և թմախառն ոտք բարձր . անոր ետեւէն մէկ մութ ու խիտ գորշ մը , և անոր հետ մէկտեղ կայմեր , տախտակներ ու գերաններ , որ կարծես թէ ծովային չըրաքիի տեսարան մըն էր : Ճայթմունքը այնչափ ուժով էր որ գետին երկու կողմի բլուրները սաստիկ ցնցուեցան , ու մինչև մօտ գեղերն ալ գետնաշարժը զգալի եղաւ : Այս յանգուգն գործն զուլթեանս մէջ ամենեւին փաստաւոր գիտուած մը չպատահեցաւ :

Շփեկառի երկնէլուրիս :

Անճեւալ տարւոյն երկրորդ վեցամեանը մէջ (Յուլիան սկսեալ մինչև Դեկտեմբեր) Անգլիոյ երկաթուղեացք վրայ երթեան կողմերուն թիւը 47, 509, 392ի հասեր է : Նոյնչափ ժամանակի մէջ 113 հոգի զանազան ճամբաներու վրայ մեռան , 264 մ'ալ վիրաւորուեցան : 8 ճամբորդ առանց իրենց կողմանէ կամաւոր առիթ մը տալու մեռան , 213 ալ վիրաւորուեցան : 9 ճամբորդ իրենց անխոհմտութեամբ մեռան . 14 մ'ալ նոյն պատճառաւ վիրաւորուեցան : Երգեկառաց ստորին պաշտօնականներէն 30 հոգի առանց կամաւոր առիթ մը տալու մեռան , ու 17 մ'ալ վիրաւորուեցան , 32 պաշտօնակալ իրենց անխոհմտութեամբ զոհ եղան մեռան , 11 ալ վիրաւորուեցան : 33 առանձնական մարդիկ ալ մեռան ու 9 հոգի մ'ալ վիրաւորուեցան ուղեւոր յանգանութեամբ երկաթուղեային մէկ կողմէն մէկալը ցաթեւ անցնելի , կամ նոյն իսկ ճամբուն վրայ քաշել :